ԱՆԴՐԱՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ANDRANIK STEPANYAN

ԿՐՈՆԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մարդկության պատմության մեջ կրոնը որպես սոցիալական երևույթ միշտ ուղեկցել է նրան իր զարգացման տարբեր փուլերում՝ այս կամ այն չափով իր դրական կամ բացասական ազդեցությունը թողնելով ինչպես հասարակական, այնպես էլ անհատական գիտակցության վրա: Կրոնը՝ որպես հոգևոր գործունեության տեսակ, մասն է կազմել առանձին խմբերի, ազգային-էթնիկական միավորների ու համայն մարդկության հոգևոր մշակույթի: Կրոնը բարդ, յուրակերպ երևույթ է, որի վերաբերյալ առկա տեսական-գիտական մոտեցումներն ու մեկնաբանություններն առանձին-առանձին վերցրած սահմանափակ են ու անբավարար այսպիսի բազմաբնույթ ֆենոմենը հասկանալու համար:

Ժամանակակից տեսական ու պատմագիտական կրոնագիտության մեջ կրոնի ֆենոմենի առաջացման, «կրոն» հասկացության վերաբերյալ գոյություն ունեն տարբեր ռացիոնալ-տեսական մտակառուցումներ, մեթոդաբանական համակարգեր, որոնցով կրոնագետ գիտնականները փորձում են հասկանալ ու բացատրել կրոնի երևույթն առհասարակ: Տեսական ու մեթոդական տարբերությունները պայմանավորված են մասնագետների աշխարհայացքային կողմնորոշումներով, որդեգրած մեթոդաբանական մոտեցումներով ու սկզբունքներով, որոնք էլ իրենց հերթին պայմանավորում են կրոնագիտական գիտելիքի ու հետազոտությունների բնույթն ու առանձնահատկությունները և ուրվագծում կրոնի ֆենոմենի վերաբերյալ ակադեմիական դիրքորոշումն ու կրոնագիտական զարգացումների հետագա ընթացքը:

Ժամանակակից տեսական կրոնագիտության մեջ կրոնի ֆենոմենի բացատրության համար որպես առաջնային հայեցակարգեր հանդես են գալիս հետևյալ ռացիոնալ-տեսական մոտեցումները. կրոնադավանաբանական կամ աստվածաբանական, փիլիսոփայական, սոցիոլոգիական, հոգեբանական և մշակութային մարդաբանական, որոնք տարբերվում են հիմնականում ելակետային դրույթներով, մեթոդաբանական մոտեցումներով և բացատական սկզբունքով: Սակայն նրանք բոլորը փոխկապակցված են ու փոխազդում են միմյանց վրա, փոխ են առնում մեկը մյուսից որոշ գաղափարներ ու սրբագրում են դրանք համապատասխանեցնելով իրենց սեփական ելակետային նախադրույթներին և հաճախ դառնում են միակը օբյեկտի կոնկրետ հատկությունները

բացահայտելու գործում: Սույն հոդվածի շրջանակում մենք չենք անդրադառնա «կրոն» հասկացության լեզվաբանական ստուգաբանությանը և ոչ էլ այս կամ այն աստվածաբանի, փիլիսոփայի, սոցիոլոգի և հոգեբանի մասնավոր տեսակետներին, այլ ընդհանուր գծերով կներկայացնենք վերոգրյալ կոնցեպտուալ մոտեցումներից միայն աստվածաբանական ու փիլիսոփայական մոտեցումները, քանի որ հոդվածի ծավալը հնարավորություն չի տալիս մանրամասն անդրադառնալ մյուս մեթոդների առանձնահատկություններին:

Աստվածաբանական (կրոնադավանաբանական) մեկնաբանությունը փորձում է հասկանալ կրոնը «ներսից» հիմնվելով համապատասխան կրոնական փորձի վրա: Մեկնաբանությունները տարափոխվում են, սակայն ընդհանուրը նրանցում հանդիսանում է պատկերացումը կրոնի մասին որպես Աստծո, Բացարձակի, Գերագույն կամ Գերբնական Ուժի, Գերագույն Մտքի, Տրանսցենդենտի հետ մարդու կապը և այլն:

Աստվածաբանությունը փորձում է բացատրել այս կամ այն կրոնի հիմնական դրույթները, կրոնական սուրբ գրքերի, եկեղեցական տիեզերաժողովների կամ կրոնական այլ տեսակի գերագույն ժողովների դրույթները և դավանաբանական-վարդապետական բանաձևերը հավատացյալ մարդկանց հասկանալի և մատչելի լեզվով: Կրոնի աստվածաբանական մոտեցումը մի մոտեցում է, որը գործում է «ներսից», կրոնի տեսանկյունից և դիրքորոշումից: Այսպիսի մոտեցման համար որպես հիմք է ծառայում կրոնական հավատը: Հետևապես, ինչպես աստվածաբաններն են կարծում, հասկանալ կրոնը կարող է միայն կրոնական մարդը, իսկ ոչ կրոնական մարդուն տրված չէ այդ կարողությունը: Սակայն նման դատողությունը հիմնավոր չի կարող լինել, քանի որ անհրաժեշտ չէ հավատացյալ լինել հասկանալու համար կրոնական հավատը կամ կրոնական ուսմունքի հիմնադրույթները: Պրոֆեսիոնալ կրոնագետը իր բանիմացությամբ և մասնագիտական բարձր կարողությունների ու փորձի շնորհիվ կարող է լրացնել այդ բացը և կատարել հիմնարար ուսումնասիրություններ այդ ամենի վերաբերյալ:

Կրոնի աստվածաբանական մոտեցմանը բնորոշ է այն հատկությունը, որ այն մեկնաբանում և դիտարկում է կրոնը որպես յուրահատուկ, գերբնական երևույթ, Աստծո հետ մարդու գերբնական, տրանսցենդենտալ կապի հետևանք: Հետևաբար, կրոնը աստվածաբանության տեսակետից ստանում է վերբնական, վերմարդկային և վերհասարակական կարգավիճակ: Աստվածաբանությունը կրոնական (կամ աստվածային) ճշմարտության բառային արտահայտման ձև է: Աստվածաբանությունը կրոնական հավատի նկատմամբ գործածված բանականության կիրառման ձև է, որն ուսումնասիրում է կրոնը «ներսից» և ռացիոնալ-

տեսական հիմնավորումներ է տալիս կրոնական հավատին ու փորձին, ընդսմին, այն հանդես է գալիս որպես կրոնական հավատի ու փորձի մեկնաբանման և ռացիոնալացման ձև: Աստվածաբանությունը հնարավորություն է տալիս մարդուն հասկանալու կրոնական հավատը, փորձը և ճշմարտությունը բանականությամբ: Հետևաբար, աստվածաբանությունը տեսականորեն հիմնավորում, դասակարգում, համակարգում և ներկայացնում է կրոնական (կամ աստվածային) գաղափարներն ու ճշմարտությունները:

Ըստ քրիստոնեական հետազոտողների կրոնը «sui generis (հատուկ սեռի) մեծություն» է և ի հայտ է գալիս որպես հետևանք Աստծո և մարդու միջև փոխհարաբերության: Սակայն արդեն կրոնագիտության որպես գիտության կայացման ժամանակաշրջանում առաջացան երկու մոտեցում կրոնի սահմանման վերաբերյալ. առաջինը, ծայրահեղ գերնատուրալիզի տեսանկյունից, իսկ երկրորդը աստվածաբանության պատմական դպրոցի դիրքորոշումից: Գերնատուրալիզմի ազդեցության ներքո մշակված քրիստոնեական աստվածաբանության մեջ հայտնի «գերբնական» հասկացությունը կիրառվեց կրոնի սահման համար: «Կրոն» տերմինը կիրառվում է նշանակելու համար այն հայացքները, որոնք հիմնվում են հավատի վրա, որ գերբնական ուժերը գոյություն ունեն և, որ հնարավոր է ունենալ հարաբերություններ նրանց հետ:

Գերնատուրալիզմը ելնում էր քրիստոնեության «գերբնական հայտնութենականության»[1] սկզբունքից և միայն աստվածային հայտնության միջոցով նրա ըմբռնման հնարավորությունից: Սակայն կրոնի մասին այս հիմքի վրա ձևավորված պատկերացումը հակասում է հասարակության զարգացումից քրիստոնեության էվոլյուցիայի կախվածության փաստին, քանի որ ակնհայտ է քրիստոնեության կապը զանազան հասարակական հարաբերությունների հետ:

Հետագայում կրոնադավանաբանական կրոնագիտության մեջ կրոնի ըմբռնման և հասարակաության հետ նրա հարաբերակցության գործում զարգացան երկու միտումներ *բաժանող և միացնող*[2]: Բաժանող միտումի ներկայացուցիչները ելնում են կրոնի և հասարակության որպես «ինքնուրույն մեծության» տարբերության դրույթից, որպես որակապես իրարից տարբեր ոլորտներ և ընդունում են կրոնի էության և բովանդակության տրանսցենդենտությունը: Կրոնի էությունը, որն արտահայտվում է դոգմատիկ ուսմունքի և աստվածապաշտության մեջ սոցիալական չէ, այս «աշխարհից չէ», այլ «վերաշխարհային» ու «վերպատմական» երևույթ է: Կրոնի «հավերժ ճշմարտությունները» արտաժամանակային բնույթ ունեն, իսկ սոցիալական են միայն կրոնի տեսանելի դրսևորումները՝ կրոնական կազմակերպություններն ու հաստատությունները:

Միացնող միտումի, այսինքն՝ կրոնի և հասարակության միացման կողմնակիցները ընդունում են, որ ժամանակակից աշխարհում քրիստոնեական սկզբունքներն ու իդեալները իրականանում են «այս աշխարհում», ինչը նշանակում է, որ տեղի է ունենում կրոնական հավատալիքների և սիմվոլների անցում կրոնական ոլորտից դեպի աշխարհիկ միջավայր, այսինքն՝ դրանք «տեղադրվում են» աշխարհիկ տիրույթում: Դա նշանակում է, որ կրոնականը և աշխարհիկը, սրբազնայինն ու աշխարհականը ոչ միայն կորցնում են իրենց իմաստը, այլ նաև ջնջվում է դրանց միջև սահմանը: Կրոնականը ոչ թե ապակրոնականացվում և աշխարհիկացվում է, այլ արտահայտվում է և դրսևորվում աշխարհիկի մեջ, իսկ աշխարհիկը՝ կրոնականում: Նման մոտեցում է կիրառվում նաև տրանսցենդենտության և իմմանենտության հիմնախնդրին: Կրոնը պահպանում է իր տրանսցենդենտ էությունն ու բովանդակությունը, սակայն դա այնպիսի տրանսցենդենտություն է, որը դրսևորվում է իմմանենտության մեջ, այսինքն՝ միաժամանակ և տրանսցենդենտ է, և իմմանենտ: Այսպիսիով «կրոնականի և աշխարհիկի», «տրանսցենդենտի և իմմանենտի» դիխոտոմիան հանգուցալուծվում է «պանթեիստական» համատեքստում:

Կրոնը, լինելով բարդ և հարուստ մարդկային երևույթ, բնականաբար, ենթադրվում է, որ այն ուսումնասիրվում է նաև գիտության այլ բնագավառների կողմից, որոնք ունեն իրենց յուրահատուկ ելակետային նախադրույթները, մեթոդաբանական համակարգը և առարկայական ոլորտը: Կրոնի աստվածաբանական մոտեցմանը, որը բնութագրվում է որպես մոտեցում «ներսից», հակադրվում է կրոնի փիլիսոփայական ըմբռնումը և կրոնի գիտական բացատրությունը, որոնք բնութագրվում են որպես մոտեցում «դրսից»: Իհարկե, այսպիսի մոտեցումը չի նշանակում, որ այն բացասական դիրքորոշում ունի կրոնի հանդեպ, և ոչ էլ մերժում է կրոնի աստվածաբանական մոտեցումը և դրա կիրառման արդյունքում առաջացած հետևությունները: Կրոնի բացատրության փիլիսոփայական և գիտական մոտեցումն ունի գրեթե նույն նպատակը, ինչ աստվածաբանական մոտեցումը, սակայն, այն հիմնվում է այլ մեթոդաբանության վրա: Եթե աստվածաբանական մոտեցումը կրոնական փորձի շրջանակում գործում է հիմք ընդունելով կրոնական դավանաբանությունը որպես ելակետային սկզբունք և բացարձակ ճշմարտություն, ապա փիլիսոփայական և գիտական մեթոդաբանությունը պահանջում է դուրս գալ այդ փորձի շրջանակից, ենթարկել կրոնը քննադատական ուսումնասիրության բանականության, տեսական-տրամաբանական և էմպիրիկական-գիտական չափանիշերի ճշտության տեսակետից: Փիլիսոփայության և գիտության մեթոդաբանության ելակետային դրույթների ընդհանրության հետ մեկտեղ կրոնի ուսումնասիրության

ընթացքում յուրաքանչյուր բնագավառի մեթոդաբանություն ունի իրեն բնորոշ առանձնահատկություններ:

Կրոնի փիլիսոփայական բացատրությունները բազմազան են և բազմատեսակ, դրանք տարբերվում են կախված իրենց ելակետային սկզբունքներից և մեթոդներից (Սպինոզա, Կանտ, Հեգել, Ֆոյերբախ, Մարքս և Էնգելս): Փիլիսոփայությունն իր ողջ պատմության ընթացքում կրոնը ևս դարձրել է իմաստավորման և ուսումնասիրության առարկա: Փիլիսոփայական մեթոդաբանությանը բնորոշ է «ունիվերսալությունը և սուբստանցիոնալությունը»[3]: Փիլիսոփայությունը փորձում է բացատրել իրականության բոլոր երևույթներն ու գործընթացները դրա համընդհանուր օրենքների և սկզբունքների բացահայտման դիրքերից՝ սահմանելով առարկաների, գործընթացների ու երևույթների «էությունները»: Փիլիսոփայությանը բնորոշ է քննադատական մոտեցումը իրականության բոլոր երևույթների նկատմամբ, այդ թվում նաև՝ կրոնի: Փիլիսոփայությունը ի տարբերություն աստվածաբանության, որը հիմնվում է հավատի վրա, ամեն ինչ կասկածի տակ է առնում, ինչը բնավ չի նշանակում, որ այն անպայմանորեն փորձում է փլուզել մարդկային կոլեկտիվ հավատալիքները, մարդկանց բարոյական սկզբունքները և այլն: Փիլիսոփայությունը կասկածում է, որպեսզի ստուգի, թե որքանով են հուսալի, հիմնավոր այդ դրույթները, սկզբունքներն ու հիմքերը:

Կրոնի փիլիսոփայական ըմբռնումը կրոնագիտության հիմնական բաժիններից կրոնի փիլիսոփայության մասն է կազմում: Կրոնի փիլիսոփայությունը փիլիսոփայության ոլորտ է, որը զբաղվում է կրոնի բովանդակության տեսական-ռացիոնալ ուսումնասիրությամբ և ստուգում է, թե կրոնաաստվածաբանական պնդումները որքանով են ճիշտ կամ սխալ: Կրոնի փիլիսոփայությունը «քննադատական ռեֆլեքսիա է կրոնական հավատի մասին»[4], այն «փիլիսոփայական հասկացությունների, սկզբունքների, կոնցեպցիաների ամբողջություն է, որի միջոցով տրվում է օբյեկտի փիլիսոփայական բացատրություն և ըմբռնում»[5]: Կրոնի փիլիսոփայությունը տարբերվում է կրոնական փիլիսոփայությունից: Եթե կրոնական փիլիսոփայությունը կրոնական մտածողություն է և փիլիսոփայական հարցերի ուսումնասիրություն կրոնական աշխարհայացքի և գաղափարախոսության տեսանկյունից, ապա կրոնի փիլիսոփայությունը «մտածողություն է կրոնի *մասին*»[6] չեզոք դիրքերից: Կրոնի փիլիսոփայության ուսումնասիրության առարկան աշխարհի և իրականության հանդեպ մարդու կրոնական վերաբերմունքն է: Կրոնի փիլիսոփայությունը ակադեմիական շրջանակներում բաժանվում է փիլիսոփայական կրոնագիտության և փիլիսոփայական աստվածաբանության: Փիլիսոփայական կրոնագիտությունը «փիլիսոփա-

յական դատողությունների ամբողջություն է, որի առարկան մարդու «կրոնական վերաբերմունքը» կամ մարդու «կրոնական գիտակցությունը» է»[7], իսկ փիլիսոփայական աստվածաբանության նպատակն է «ստեղծել Աստծո մասին ուսմունք միայն փիլիսոփայական միջոցներով»[8], այլ կերպ կարելի է ասել, որ փիլիսոփայական աստվածաբանությունը ստեղծում է կրոնական ուսմունք փիլիսոփայական կատեգորիաներով, հասկացություններով և գործիք-միջոցներով: Հետևապես, կրոնի փիլիսոփայությունը բազմակողմանի, բազմաբնույթ և համալիր մոտեցում է կիրառում կրոնի ուսումնասիրության հանդեպ:

Այսպիսով, սույն հոդվածի շրջանակում մենք անդրադարձանք «կրոն» հասկացության վերաբերյալ հիմնական հայեցակարգերից երկու տեսական-մեթոդական մոտեցումներին՝ աստվածաբանական ու փիլիսոփայական: Այս հայեցակարգերը յուրովի են մոտենում կրոնի ֆենոմենին ու հասկացությանը՝ կիրառելով տարբեր տեսական մոտեցումներ ու մեթոդաբանական համակարգեր: Ինչպես աստվածաբանական, այնպես էլ փիլիսոփայական հայեցակարգերը սեփական առարկայական ոլորտի դիրքերից փորձում են ըմբռնել ու մեկնաբանել «կրոն» հասկացությունը: Թեև դրանք տարբեր հայեցակարգեր են, սակայն երկուսն էլ համալրում են միմյանց և ձևավորում «կրոն» հասկացության ամբողջական ըմբռնում:

---

[1] Основы религиоведения. Под ред. И. Н. Яблокова. М. 2004, с. 16.
[2] Նույն տեղում, էջ 16:
[3] Радугин А.А. Введение в религиоведение. М. 2001, с. 13.
[4] **C. Stephen Evans.** Philosophy of Religion: Thinking about Faith, Downers Grove: IVP, 1982, p. 11.
[5] Основы религиоведения, с. 6.
[6] **C. Stephen Evans.** Philosophy of Religion, p. 16:
[7] Кимелев Ю.А. Философия религии: Систематический очерк. М. 1998, с. 12.
[8] Նույն տեղում, էջ 16: